Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է **գործընթացների, ապրանքների ու ծառայությունների** արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ» ՍՊԸ

- Սննդի արտադրություն –

Կազմակերպության մասին

Հասցե՝ Արագածոտն մարզ, Աղձք, Հայաստան
Հիմնական արտադրանքներ՝ թռչնաբուծություն ձվի արտադրության համար
Աշխատակիցների քանակ՝ 82 (42 կին ու 40 տղամարդ)
Հիմնական շուկաներ՝ Հայաստան
Հիմնադրման տարեթիվ՝ 2007

«**ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ**» ՍՊԸ-ն առաջատար ձու արտադրող է Հայաստանում՝ ընդգրկելով ազգային շուկայի ավելի քան 8%-ը: Հիմնադրման օրվանից՝ 2007 թվականից, ընկերությունն անընդհատ ընդլայնվել է. ներկայումս ունի հինգ թռչնանոց (մեկը՝ ձտերի բուծման և չորսը՝ ածան հավերի համար): 2015-2016 թվականների համար նախատեսված աճի ծրագրերով ընդլայնվել են ևս երեք թռչնանոցների հնարավորությունները՝ ներկայիս հզորությունը հասցնելով ընդհանուր 275,000 ածան հավերի: Հաստատությունները հագեցած են բարձր ավտոմատացված համակարգերով՝ կերակրման դիսպենսերներ, ջրամատակարարում, գոմաղբի հեռացման համակարգեր, օդափոխություն, կլիմայի վերահսկում և ձվերի հավաքում ու փաթեթավորում: Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ձեռք բերելու դրդապատճառներով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

- **6 ՌԱՄԱ տարբերակների իրականացում**
- **Նվազեցրեց կորուստները՝ թռչունների անկումից, ավելացավ ձվի արտադրության տեսակարար ցուցանիշը 5% -ով (շնորհիվ բարելավված ներքին կլիմայի և կերի բաշխման ռեժիմի)**
- **Միավոր զանգվածի վրա ծախսվող էներգիայի կրճատում՝ 3% էլեկտրաէներգիա և 2% բնական գազ, ամեն 1,000 ձվի համար**
- **Տարեկան 23 տոննա CO_2-ի կրճատում (ավելի էներգաարդյունավետ արտադրության արդյունքում)**

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատում ուսումնասիրել է արտադրական տարածքը ու նույնականացրել 10 ՌԱՄԱ տարբերակ, որոնցից իրականացվել են 5-ը: «ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ» ՍՊԸ-ն որոշել է կենտրոնանալ իր արտադրական գործընթացների օպտիմալացման, ռեսուրսների վերամշակման համար նոր սարքավորումների տեղադրման և էներգիայի օգտագործման կրճատման վրա:

ՌԱՄԱ տարբերակ 1: Հավի կերի բաշխման ռեժիմի ու թռչնանոցների բնապահպանական պարամետրերի օպտիմալացում: Այս թարմացումը ձեռք է բերվել վերահսկիչ համակարգերի ու սարքավորումների բարելավմամբ՝ ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, լուսավորության և այլ գործոնների համապատասխան պարամետրերը պահպանելու համար: Որպես հետևանք՝ սա դրականորեն ազդեց ձվի արտադրության ու որակի վրա: Օպտիմալացման միջոցով ընկերությունը բարձրացրեց արտադրողականությունը, կրճատեց թափոնները և ընդհանուր առմամբ ցուցաբերեց ռեսուրսների ավելի լավ օգտագործում:

ՌԱՄԱ տարբերակ 2: Թռչնանոցների օդափոխման համակարգից ջերմության վերականգնում: Ջերմության վերականգնման համար օդափոխության տեխնոլոգիան օգնեց օգտագործել ջերմային էներգիան՝ նախապես տաքացված թարմ օդը սնուցելու համար, հիմնականում ձմեռային ու մեղմ սեզոնների ժամանակ էներգաարդյունավետությունը բարելավելու նպատակով:

ՌԱՄԱ տարբերակ 3: Էներգիայի աղբյուր/ ջեռուցման անջատիչ: Թռչնանոցներում էլեկտրական վառարանները փոխարինվել են բնական գազի վառարաններով:

ՌԱՄԱ տարբերակ 4: Ներքին ու արտաքին լուսավորության փոխարինում ավելի արդյունավետ այլընտրանքներով: Ներքին շիկացվող լամպերը փոխարինվեցին LED լամպերով, իսկ արտաքին մետաղական հալոգեններով լամպերը՝ բարձր ճնշմամբ նատրիումի լամպերով (նատրիումի գոլորշիներով լամպեր): Այս տարբերակն օգնեց նվազեցնել էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառումը:

ՌԱՄԱ տարբերակ 5: Թռչնանոցների շենքերի ջերմամեկուսացման բարելավում: Ներքին ու արտաքին միջավայրերի միջև ջերմափոխանակությունը վերացնելու մի շարք միջոցառումներ են իրականացվել, որոնք նվազեցրել են էներգիայի ավելորդ ու անհարկի օգտագործումը:

Պահպանելով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մոնիթորինգի հաշվետվության վերջում ընկերության անձնակազմի կողմից իրականացվել է **ՌԱՄԱ 5 տարբերակ**:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ներդրումներ (եվրո)	Խնայողություններ (եվրո/տարի)	Վերադարձման ժամկետ (տարի)
5 ՌԱՄԱ տարբերակ՝	23,490	8,380	2.8

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

	Էներգիա (կՎտժ/տարի)	Նյութեր (տ/տարի)	Թափոն (տ/տարի)	CO_2 (տ/տարի)
5 ՌԱՄԱ տարբերակ՝	109,000	2	2	23

Այլ հնարավորություններ

«ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ» ՍՊԸ-ն որդեգրել է ՌԱՄԱ միջոցառումներ, որոնք ուղղված են արտադրության օպտիմալացմանը, վերամշակմանը և էներգիայի օգտագործման կրճատմանը (տարեկան 78,400 եվրոյի չափով): Լրացուցիչ օգուտները ներառում են սոցիալական ու բնապահպանական գործոնները, ինչպես նաև աշխատանքային պրակտիկայի ու մասնագիտական առողջության բարելավումը: Առաջարկված ՌԱՄԱ միջոցառումները ներառում էին նաև ձվի փոշու արտադրության կազմակերպումը, թափոնների օգտագործումը, այլուրի անասնակերի արտադրությունը, հավի կերի բաշխման ռեժիմի համակարգված օպտիմալացումն ու էներգետիկ համակարգերի արդիականացումը: Այս ասպեկտները կարող են օգնել ընկերությանը՝ հասնելու ավելի մեծ շուկաների և բիզնեսի, սոցիալական ու բնապահպանական գործունեության ավելի մեծ օգուտների: Մոնիթորինգի փուլում նաև առաջարկվել է արևային էներգիայի օգտագործումը (ֆոտովոլտային վահանակներ ներցանցային համակարգի համար), քանի որ այն կբերի տարեկան 703,978 կՎտժ (տարեկան 39,087 եվրո, մոտ 7 տարի մարման ժամկետով): Արդյունքում էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը կկրճատվի 65 %-ով:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին՝ պահպանելու իրենց բնական կապիտալն ու բարձրացնելու մարդկանց բնապահպանական բարեկեցությունը, աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք **www.eu4environment.org**:

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չերնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
էլ: t.chernyavskaya@unido.org

Կովկասի ՏԲԿ
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148